րոնք քաղաքակրթութեան իսպառ անընդունակ են, քանի որ մուսուլման մնան, արտաքսելու խաղաղ միջոցներով Հայաստանի սահմաններէն դուրս։ Այս է իրաւունքի եւ արդարութեան ձայնը։

Մեր նախընթաց յօդուածի մէջ, օրինակ բերինք զՍպանիան, որ մինչեւ զԱրաբներն չարտաքսեց իւր սահմաններէն դուրս, չգտաւ իւր ներքին շինութիւնն եւ խաղաղութիւնը, որով եւ հասաւ իւր փառաց գագաթնակէտին, հաստատելով իւր գերիշխանութիւնը Հին եւ Նոր աշխարհի վրայ։ Արեւը իւր տէրութեան մէջ չէր մտներ։

ՄԵՂՈՒ ՇԻՐԱԿԱՑ

# ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ

*ԱԶԳԱՅԻՆ վերածնունդի պատմութեան մէջ՝ երբ մեր Մայր Հայրենիքի թախծահար պատկերը աւերակներու կոյտերէն յարութիւն կ'առնէ դէպի նոր կեանք մը, գլխաւոր գործիչներուն շարքին մէջ՝ որոնք կրցան մեր Երկրին ազատութեան մեծ գործին իրենց զօրաւոր աջակցութիւնը տալ, կրնանք յիշել պարծանքով Զօր. Անդրանիկի փառազարդ անունը։*

*Ամենէն աւելի ժողովրդականութիւն վայելող դէմք մը՝ որ իր ժողովուրդէն բոլորովին սիրուած, գրեթէ պաշտուած է... վասն զի իր բովանդակ կեանքը նուիրեց Հայ ժողովուրդին պաշտպանութեան, իր բոլոր կեանքն և հոգին ձօնեց մեր Հայաստանի անկախութեան գործին, ինքզինքն ողջակէզ դնելով Հայրենիքի բագնին վրայ՝ ուխտելով մինչև ցմահ կռուիլ անդադար՝ ազատութիւնը ձեռք ձգելու համար։ Իր կենսագրութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ անլուր հերոսութիւններու շարք մը, հիասթափ դիւցազնութիւններու անհատնում դրուագ մը։*

*Իր ամբողջ անձին մէջ կը ներկայացնէ ամբողջ հայ ազգային յոխորտանքի և ըմբոստացումի ոգին և Հայրենիքի սրբազան սէրը։ Ծնած է ի Շապին–Գարահիսար, 53 տարի առաջ՝ աշխատաւորներու ընտանիքէ մը։ Ատաղձագործութիւն էր իր արուեստը. իր դիրքը բարւոքելու համար կ'երթայ Կ. Պոլիս, ուր զանազան յեղափոխականներու ծրագիրները տեսնելով, Հայրենիքը փրկելու համար՝ անոնց շարքերուն մէջ կը մտնէ։ Բնութեամբ աշխոյժ և գործունեայ՝ իր ընկերներէն կը սիրուի և իբր կազմակերպող ոյժ մը երևան կու գայ։ Մեծամեծ օգնութիւն և իր կարող աջակցութիւնը տուաւ՝ 1896ի Կ. Պօլսոյ քստմնասարսուռ ջարդերու ժամանակ. յետոյ կ'անցնի Ռումանիա և ապա Կովկաս՝ որ յեղափոխականութիւնը մեծամեծ քայլեր առած և կազմակերպուած էր։ Իր ծրագիրներուն մէջ էր Հայաստանի ապստամբութիւնը Թրքաստանի դէմ. որուն համար պէտք էր անձնապէս տեղւոյն վրայ գտնուիլ. ուստի իր հերոսներու խումբով կը մտնէ Թրքահայաստանի սահմաններուն մէջ և իր գործունէութեան կեդրոնը կ'որոշէ քաջասրտութեան և հայրենասիրութեան օրրան Տարօն գաւառին մէջ...։ Չորս տարիներու (1897–1901) շրջանին մէջ՝ անհամար պատերազմներ մղեց իր փոքրաթիւ խումբով բազմաթիւ կանոնաւոր Թուրք զինուորներու դէմ՝ Մուշի և Բաղէշի սահմաններուն մէջ։ Այլ և այդ դիւցազնական մարտերու և սխրագործութիւններու լուրը հասած էր ամէն հայու սրտին... ապստամբութեան գաղափարը ի սէր հայրենեաց շատ կուսակիցներ կը ժողվէր Անդրանիկի խմբակը ստուա-*

© National Library of Armenia

բացնելու համար. մշեցին և սասունցին՝ մահը աչքն առած՝ ուխտած էր այդ գործը իրականացնել։

Սասունի ապառաժներէն՝ ուր դրած էր արծուենման Անդրանիկն իր բոյնը, 1904ին՝ արդարացի ապստամբութեան աւետիսը տրուեցաւ. բայց կանխահաս էր այդ ծրագիրը, վասն զի մեծ կազմակերպութիւն մը չի կար մէջտեղ, այլ խանդավառութիւն։ Կասկածելով թրքական Պետութիւնը պատահելիքին վրայ՝ ծածուկ կերպով կը կեդրոնացնէ Մուշի գաւառին մէջ անհամար կանոնաւոր զօրք՝ թնդանօթներով և զէնքերով զինուած։ Անդրանիկ իր 250 ընկերներուն միացուցեր էր 1000ի չափ քաջայանդուգն Սասունցիներ, որոնցմով կը բաղխի թուրք բանակին հետ. այդ անհաւասար կռուին մէջ ինկան դիւցազնօրէն Անդրանիկի երկու օգնական բազուկները՝ վահան և Հրայր, որոնք երկու աննման զինուորներ և հայրենասէրներ էին...։

Անդրանիկի գլուխը Սուլթանին տանողը՝ մեծապէս պիտի վարձատրուէր. վասն զի այդ գլխահատումով՝ Պետութիւնը կը յուսար թունաւոր օձին գլուխը ջախջախել, այսինքն մի անգամ ընդ միշտ կ'ուզէին ապստամբութեան առաքելը մէջտեղէն վերցնել։ Բայց Անդրանիկ կարևոր էր՝ Հայաստանի անկախութեան գործը պսակելու համար։ Հետևաբար մեր Աքիլլէսը իր 70 ընկերներով կ'ինչնէ Մուշի դաշտը և անկէ կ'անցնի Բաղէշի Շամիրամ գիւղը՝ ուր կը պաշարուի թուրքերէն...։ Դիրքը շատ վտանգաւոր էր. ճարտարութեամբ կ'ապաստանի գիւղին եկեղեցւոյն տանիքին վրայ և հոնկէ 12 ժամ անդադար կը կռուի 4000 հոգւոյ դէմ։ Վերջապէս՝ արևու մարը մտնելուն՝ գիշերն իր աջակցութիւնը կը շնորհէ մեր հերոսին որ բնութեան օգնութիւնն իր քաջասրտութեան և ճարտարամտութեան միացնելով՝ կը ճեղքէ կ'անցնի անարգել թշնամւոյն գիծերը և տագնապալից ընթացքէ մը վերջ՝ կը հասնի վան, ի մեծ զարմանս թշնամւոյն և հայերուն։ Ապա կ'անցնի անվտանգ ի Պարսկաստան՝ զոր թողլով՝ կ'ուղղուի դէպի Կովկաս։

Անդրանիկ յոգնած՝ այլ ևս քիչ մը հանգստութեան կը կարօտէր, յետ այնքան անքուն գիշերներու և անվերջ արշաւանքներու կը կարծէր որ իր հանգստավայրն ըլլար Կովկաս, բայց հոն ալ Ռուս Ցարական կառավարութիւնը յոխորտ և գէշ աչքով կը դիտէր Անդրանիկի գործունէութեան, որ Հայաստանը Հայուն կ'ուզէր տալ, մինչդեռ Ռոմանովներու ծրագրին մէջ որոշ կերպով վերտառուած էր այդ անարգական քաղաքականութիւնը «Հայաստանն առանց Հայերու» ռուսական երկարծուենիներու ճիրաններուն տակ յօշոտել։

Անդրանիկի գործունէութեան նոր շրջան մը կը բացուի՝ 1912ի թուրք–Պալքանեան պատերազմի ժամանակ։ Նա ո՛և է միջոցի կը դիմէր՝ կարենալու կռուիլ ուղղակի երես առ երես, ճակատ առ ճակատ իր ազգակիցներու անողորմ դահիճներուն հետ։ Հետևաբար հրաման կը խնդրէ պուլղարական ռազմաշարքերուն մէջ մտնելու իր խմբակով, ուր իր 300 կորիճ կամաւորները՝ Կումուլճինայի պատերազմին մէջ նշանաւոր կը հանդիսանան. այնպէս որ Ֆէրտինանդ կայսրը՝ իր ազգայիններուն հիացման և երախտագիտութեան իրրև առհաւատչեայ՝ մասնաւոր արքայական նշանով կը պատուէ Անդրանիկի կուրծքը։

Մինչև հոս Անդրանիկի կեանքին առաջին դրուագն էր՝ որուն միջոցին պատրաստեց և կազմակերպեց իր ծրագիրներուն հիմքերը...։ Ասկէ վերջ կը սկսի իր գործունէութեան բուն շրջանը՝ որ սկսաւ վերջին աշխարհակործան պատերազմով։ 1914 օգոստոսի օրերն էին՝ երբ մահասարսուռ մարտազոյժեր կը զղրդէին խաղաղութեան երջանկութիւնը...։ Ռուսական կը ճակատէր Ցանկաստանի դէմ. ռուս և հայ երիտասարդութիւնը կը դիմէր տագնապալից՝ Գերմանիոյ և Ցանկին դէմ մաքառելու...։ Անդրանիկ առաջինն էր որ իր ուխտապահ և մահատեաց խումբին գլուխն անցած՝ կը դիմէր Կովկասի ճա-

© National Library of Armenia

կաոը, իր հայրենիքը կործանել սպառնացող խուժանին դէմ կանգնելու։ Ըմբռնեց որ հայ ազատութեան վերջին պատերազմն էր որ կը մղուէր, շնորհելու համար մեր Հայրենեաց՝ իր կորուած անկախութիւնը։

Որքան Տաճիկին կատարած աղէտարշ ջարդերու զոյժերը կը հասնէին հայութեան սրտին, այնքան սրտաբորբ և հայրենասիրտ երիտասարդներ՝ սուրբ նախանձախնդրութեամբ վառուած՝ կը թողուին իրենց տնական խաղաղ յարկը կամ գործառնութիւնները և կը դիմէին Կովկաս՝ Անդրանիկի հրամանին տակ եղող շարքերուն մէջ կամաւոր արձանագրուելու...։ Այս անգամ Հայկական սուրբ պատերազմն էր որ կը փողուէր համբէն Հայութեան։

Ամէն հայու հանրածանօթ է այն հմտերական դիւցազնէրգութիւնները որ մեր կտրիճ կամաւորները գործեցին հինգ երկար տարիներու շրջանին՝ Կովկասի ռազմաճակատներուն վրայ։ Մեր հերոսները՝ թուով միշտ նուազ՝ բայց քաջութեամբ և հայրենասիրութեամբ գերազանցօրէն բարձր, գրոհ տուին խիզախօրէն դարաւոր ոսոխին դէմ...։ Իրենց դատը՝ արդար էր և ճշմարիտ իրաւունքի վրայ հիմնուած. փրկել գերի ժողովուրդ մը, ազատել Հայրենիք մը, երջանկացնել իրենց եղբայրները...։ Նոր Հոմերոսներ և Վիրգիլիոսներ պէտք են՝ արժանավայել կերպով անմահացնելու համար հայ տղերքներու սքանչագործութիւնները, որոնք իբր նոր Վարդանանք մահն աչք առած՝ կը դիմէին ռազմավայր՝ Անդրանիկի բարձր և վստահաշունչ հրամանին տակ, երգելով և խրնդալով...։ Որքան դարերու բռնակալական ծանր լուծը կը կշռէր մեր ուսերուն վրայ, այնքան ալ ընդվզումի և ազատութեան սուրբ պատերազմը կը խանդավառէր և կը զգլխէր մեր երիտասարդ դասակարգը։

Եւ այդ փառապանծ օրերուն է որ տեսանք Վանի դիւցազնական դիմադրութիւնը, Շապին-Գարահիսարի՝ Անդրանիկի ծննդավայրին ընդվզումը, Սասունի, Զէյթունի, Եղեսիոյ մինչև ցարդ դեռ կատարեալ կերպով չլուսաբանուած քաջագործութիւնները, Մուսա-Տաղի անմոռանալի ռազմադրուագը՝ որուն վկաները դեռ Բորդ Սայիտ կը կրթուին...։ Կարին որուն համար գերման մեծ զօրապետները պատգամած էին թէ երբեք անմնատուր պիտի չըլլար, հայ հերոսներու անվկանդ բաղխումին չի դիմանար, տեղի կու տայ...։ Գեղատեսիլ Մուշը՝ բիւրաւոր դիւցազնէրու օրանը՝ Սամփսոնի պէս՝ իր կործանումին մէջ կ'ուզէ կործանել, սանդարամետին ղրկել հազարաւոր թշնամիներ...։ Ամբողջ Հայաստան եղաւ հրաբուխ մը՝ կրակի և արեան։

Բայց դժբաղդաբար կայ նաև մեր այդ դրութեան տխուր կողմը...։ Կովկաս գրկաբաց կ'ընդունէր իր արևմտահայ եղբայրները՝ որ հոծ բազմութեամբ և խուսնէրամ, չքաւոր ձեռնունայն կը դիմէին դէպի հոն...։ Եղեռնալի տեսարանները կը սկսէին...։ Սարսափելի կոտորածներէ մազապուր այդ վերապրողները՝ պէտք ունէին ամէն օգնութեան և մխիթարանքի։ Մահուան սարսափեցուցիչ ուրուականը կ'օրօրուէր հայութեան այդ թեկորներուն վրայ...։ Եւ ահա Անդրանիկ՝ զարձեալ իր ժողովուրդին Առաքեալն է, իր եղբայրներուն զօրավիգը։ Նա գեղեցիկ գաղափարը կ'ունենայ հիմնել օրկան մը՝ որ իր ժողովուրդին իրաւունքներուն պաշտպան ըլլալէն զատ, օգնէր ամենայն կերպով անոնց բարօրութեան և մխիթարէր զիրենք։ Այս օրաթերթն էր Հայաստանք, որ հետեւեալ ծրագիրն ունէր իր գործունէութեան՝ իր խօսքերուն համեմատ՝ քաղելով կարևոր յօդուածները.

«Կը հիմնենք օրկան մը որուն նպատակը պիտի ըլլայ.

1. Իրարու քով բերել Արևմտահայերը՝ հաւաքելու իրենց ճիգերը հայրենիքի վերաշինութեան համար։

2. Ստեղծել համանուագ մտայնութիւն մը բոլոր Արևմտահայերու մէջ։

4. Ներկայացնել մերկ պատկերը մեր վերապրող զանգուածին մանաւորապէս և բոլոր Արևմտահայոց ընդհանրապէս։

© National Library of Armenia

6. Լայնօրէն բանալ իր էջերը գաղթականական որ և իցէ հարցի շուրջ, տեղ տալով ամէն տեսակ կոչերու, ծանուցումներու տեղեկատու պիւրոյի, ձրիաբար.

8. Հայաստանը չպատկանիր ո՛ և է կուսակցութեան և հոսանքի...։

10. Հայաստանը հանդէս կու գայ մեր հայրենիքի առասպելական չարչարանքի ժամուն և կ'ողջունէ այն ամէնը, որոնք՝ մոռացած քաղաքական ամէն դաւանանք՝ կը միտին ստեղծելու հայ ազգային ազատագրութիւնը, ըլլան անոնք Արևմտահայեր, ըլլան Արևելահայեր։ Հայաստանը պիտի ըլլայ այն հանգրուանը՝ ուր պիտի միանան և իրարու ձեռք սեղմեն բոլոր տառապած հոգիները »։

Նոյնածին օրաթերթը՝ իր շուրջ հաւաքեց համակիրներու և գործակիցներու հոծ խումբ մը, առաջին թիւը որ լոյս տեսաւ շուրջ[1] 27 Ապրիլ 1917ին Թիֆլիզի մէջ, ասոր ձեռնարկողն եղաւ Անդրանիկ, «գլխաւոր ջիղը և քարտինալ սիւնը այս թերթին». իսկ խմբագրապետն էր Վ. Թոթովենց ճարտար և սահուն գրագէտը։

Թերթը զերծ եղաւ ո՛ և է աղանդէ, ո՛ և է կուսակցութենէ. իր դառը ժողովուրդի շահերուն պաշտպանութիւնն էր։ Իր գործունէութիւնը և ուղղութիւնը կը գտնենք խմբագրութեան հետևեալ բառերուն[2] մէջ. «Հայաստանի հետ կապուեցան շատ բամբասանքներ, թիւրքահայի և ռուսահայի խնդիր, հակադաշնակցական նայլն։ Թերթը իր ուղղութեամբ պարզեց որ իր համար չի կան հայ ժողովուրդի երկու հատուածներ, այլ կայ աշխատանքի բաժանման անհրաժեշտութիւնը։... Մենք չեղանք հակադաշնակցական, այլ հակա – ամէն ինչ, հակա–ամէն հին արժէք, որ մեր աչքին առջև կը ներկայանար իբրև դժընդակ ողբերգութիւն և սարսափելի աւեր։

Զօր. Անդրանիկ

Հայաստանը չեղաւ միայն օրաթերթ, այլ տեսակ մը կեդրոնական վայր մեր գաղթականներուն։ Մենք հաղորդակցութիւն պահեցինք վերապրող բոլոր ցրուած մանիկներուն հետ, դիմեցինք անոնց համար ամէն տեղ, առաջնորդ հանդիսացանք գլխէն զարնուած և վերքը չկրցող կապող թիւրքահայ մարդուն։ Հայաստանը Արևմտահայ խորհուրդին հետ

1. Առաջին թիւին հրատարակութեան թուականն որոշ չենք գիտեր, վասն զի Վենետիկ Գրադարանին հասան միայն թիւ 24 էն սկսեալ։

2. Հայաստան. թիւ 24, Բ. տարի.

© National Library of Armenia

միասին, հանդիսացաւ միակ և քօնքրէտ մխիթարութիւնը արիւնազուրկ, սիրեւազուրկ, ընչազուրկ և շուարած հայ ժողովուրդի այն զանգուածին որ կը կոչուի գաղթական։... Մենք լսած ենք ժողովուրդին, կը լսենք դարձեալ ժողովուրդին։ Ժողովուրդը, – ահա բարձրագոյն կամքը։ Օրաթերթը կը պատկանի ժողովուրդին։ Անիկա իր շեփորն է, իր ցաւերուն և ուրախութիւններուն միակ արձագանգը »։

Ու Հայաստան շարունակեց խրոխտ և խոհեմ՝ իր ժողովրդապաշտպան ընթացքը. օգնեց թշուառ գաղթականին, սրբեց անոր արտասուքը, ամոքեց անոր դառն ցաւերը։ Վատահօրէն կրնանք ըսել, թէ Անդրանիկի թերթին այս յղացումը՝ իր բազմաթիւ փաղքերէն մին կը կազմէ։ Բայց ո՞վ գիտէ, կուսակցական հակառակութիւնները էին թէ այլ անծանօթ պատճառներ, որ ստիպեցին Հայաստանի դաղարումը (թէև խմբ.ը կը յայտնէ թէ կարին փոխադրուելու պատճառաւ է)։ Փախստականները խորին կսկիծով կարդացին անոր վերջին թիւին (15 փետր. 1918) ճակատին վրայ այս անակնկալ տողերը. « Այս թիւով «Հայաստան» կը դադրի թիֆլիզի մէջ. հաւանաբար փոխադրուի Կարին, եթէ բարեյաջող պայմաններ ստեղծուին »։

Այսպէս կը դադրի Անդրանիկի գլխաւոր օրգանը, իր պաշտօնաթերթը՝ որ բոլոր ժողովրդեան և արտասահմանի հայութեան սիրելի էր և յօժարութեամբ կը կարդացուէր։ Բայց իր գործունէութիւնը երբեք չի դադրիր, մանաւանդ թէ ընդհակառակն՝ երբ ռուս յեղափոխութեան հետեւանքով՝ պոլշեվիկութիւնը մեծաքայլ կը յառաջանար, ու այլ ևս ռուս զինուորներուն մէջ կը մարէր հայրենիքի սէրը, ազատութեան պատերազմի եռանդը, ահա Անդրանիկ որ կ'ըմբռնէ մօտալուտ վտանգը. կը տեսնէ սրտին մեծ ցաւով՝ թէ երբեմն հայ զինուորներն ալ՝ որ չորս երկար տարիներու շրջանին ցոյց տուած էին անձնման հերոսութեան օրինակներ, պոլշեվիկեան թոյներէն արբշիռ կը դասալքեն և կը փախչին։.. Այլ ևս Հայրենիքի օրհասն էր, անդարմանելի մահը։ Ուրիշ միջոց չի կար եթէ ոչ ազդու և սրտեռանդն կոչ մ'ուղղել հայ զինուորներուն, իր անբաժան ընկերներուն։ « Ռուսական զօրքը... կը թողու Հայաստանը և կը հեռանայ՝ անպաշտպան թողելով մեր հայրենիքի սահմանները և խաղաղ ազգաբնակութիւնը։.. Թշնամու բանակները և քիւրդական կարգ մը աւազակային խումբեր... կը պատրաստուին օգտուիլ հանգամանքէն՝ դարձեալ արիւնով ողողելու մեր հայրենիքը ... Թիւրքահայ եղբայրներ, հայրենիքը վտանգի մէջ է։ Մեր բերանով ողջ հայութիւնը և մեր բազմաչարչար նահատակներու ստուերն է որ ձեզ կը դիմէ։ Ձեզ կը դիմենք, բոլոր կուսակցութիւններ, անխտիր, դադար տուէ՛ք ձեր վէճերուն և մղեցէք ձեր ետևէն եկող երիտասարդութիւնը դէպի հայրենիքի վտանգուած սահմանները։

« Ձեզ կը դիմենք, հայրենակցական միութիւններ, գործի գլուխ անցէ՛ք և ձեր ետևէն եկող հայրենակիցները անմիջապէս առաջնորդեցէք դէպի հայրենիքի պաշտպանութեան գործը։

« Ձեզ կը դիմենք, երիտասարդ մտաւորականութիւն, ի սպաս դրէք ինքնապաշտպանութեան գործին ձեր ընդունակութիւնները և ձեր բոլոր ուժերը։

« Ձեզ կը դիմենք, ուսուցիչներ, բժիշկներ, իրաւաբաններ, տրամադրեցէք ձեր գիտութեան պաշարը հայրենիքի պաշտպանութեան օգտին։

« Արհեստաւոր, գիւղացի և բանուոր, ձե՛զ կը դիմենք. դուք միշտ եղած էք զգայուն և զոհաբերող, օգնութեան հասէք վտանգուած հայրենիքին։

« Եւ ձեզ ամէնքին, ո՞վ զգացում ունի և գիտակցութիւն հայրենիքին սպառնացող վտանգին, ձեզ կը դիմենք, շտապեցէ՛ք, ով ինչով կարող է, պաշտպանելու համար հայրենիքի սահմանները և անոր ազգաբնակութիւնը։

« Միջոցներ ձեռք են առնուած ապահովելու երկրապահ զօրաշարքի մէջ մտնող զինուորներու ընտանեաց ապրուստը։

« Մենք չենք հաւատար որ գտնուի մէկը,

© National Library of Armenia

*որ այս ծայրագոյն ճգնաժամին նախընտրէ իր հանգստութիւնը և արձագանգ չտայ այս կոչին։ Թող գիտնան բոլորը, որ այդպիսիները դաւաճան պիտի համարուին սերունդներու, մարդկութեան և պատմութեան առջև, և ոչ մի կուսակցութիւն, միութիւն և ընտանիք չպիտի ուզէ հիւրընկալել իր ծոցին մէջ այդպիսիները, որոնց սիրտը քար պէտք է լինի և խիղճը մեռած։*

*«Հայրենիքը վտանգի մէջ է։*
*Վտանգի մէջ է և մեր գոյութիւնը։*
*Արձագանք տուէք մեր զօրակոչին»։*

Հայաստանի Ապահովութեան Խորհուրդ

*Հայաստանի երկրապահ զօրամասի հրամանատար*

ԱՆԴՐԱՆԻԿ

*Այս կոչը՝ որ կը բղխէր Անդրանիկի հայրենասէր սրտին խորէն՝ վերջին ճգնաժամի և օրհասականի մը աղերսն էր՝ ի փրկութիւն հայ ազգութեան՝ որ բոլորովին ծանր սպառնալիքի մը տակ կը գտնուէր։ Զգաց հայ երիտասարդութիւնը կացութեան ծանրութիւնը, ըմբռնեց Հայրենիքի կործանումին մօտալուտ վտանգը, և նախկին օրերուն եռանդով, հայրենիքի սիրով արբշիռ՝ դիմեց վերստին ռազմաճակատ, ձեռք առաւ հրացանը, կուրծք տուաւ թշնամիին և պահեց անաղարտ իր պատիւը և Հայրենիքի անունը։*

*Բայց ի՞նչ կրնար ընել փոքրիկ հերոսներու խումբ մը, անհատեսիլ բազմութեամբ թշնամիներու դէմ ըլլալէն զատ, ինքզինքը վտանգուած և իր դրացի Վրացիներէն և Թաթարներէն պաշտպանուելու վտանգին մէջ տեսնելով...։ Այլ ևս անկարելի էր դիմադրել, պէտք էր զէնքերը վար առնել, և Հայրենիքը վերահաս կործանումէն փրկելու համար՝ խաղաղութիւն խնդրել..։ Բայց Անդրանիկ որ իր կեանքին մէջ երբեք թշնամւոյն չէր տուած իրենցմէ շնորհք խնդրելու մխիթարութիւնը՝ լռեց, և իր հերոսներով քաշուեցաւ ճակատէն, իր բանակավայրը հաստատեց Նախիջևանի մէջ։*

*Բայց զինադադարումի օրէն իսկ, նա ո՛չ երբեք դադրեցաւ իր ժողովուրդը պաշտպանելէն. միշտ արթուն կեցաւ. հո՛ն էր ուր կռուի հոտը իրեն կասկածներ կու տար. միշտ իր սիրելի տղերքներուն մէջ, միշտ իր պաշտած և պաշտպանած ժողովուրդին մօտիկ։*

*Նա այլ ևս կատարուած տեսաւ՝ իր համօրէն իղձերուն և գաղափարներուն իրականութիւնը։ Այլ ևս իր առաքելութեան երկրորդ շրջանն ալ կատարած էր։ Մեր հերոսը՝ յետ յիսուն երկար տարիներու անընդհատ գործունէութեան և կռիւներու, այսօր կը գտնուի Եւրոպա, տալու իր մտքին և մարմնոյն այն ըղձացուած հանգիստը, որուն իրապէս արժանի է։*

*Նա հեռուէն կը դիտէ՝ անմահ Մասիսի ոտքերուն տակ իր ոսոխին ջախջախուած գլուխը, անոր դարաւոր բռնապետական պետութեան կործանումը...։ Դեռ օրհասականի վերջին խլրտումներն են որ կը լսուին. վիրաւոր յուլը աւելի քան երբէք կատաղի է...։ Աւերակներու և փլատակներու գերեզմանական լռութիւնը կը բեկանի նախկին տուները վերադարձող գաղթականներու օրհներգներէն... եկեղեցիներու կոչնակները կը կափկափեն. Հայաստանն է որ կը զարթնու, Նոր Հայաստանն է որ յուսալից և խոստումնալից կը վերականգնի՝ իր հերոսներու անմահ յիշատակով։*

ՄԻՀՐԱՆ ՇԷԽԻԿԵԱՆ

© National Library of Armenia